



**ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- **Եթե ես համապատասխանում եմ հայտարարությունում նշված չափանիշներին, արդո՞ք դա նշանակում է որ ես ֆինանսավորում կստանամ:**
Կրթաթոշակները տրամադրվում են մրցութային կարգով, քանի որ տրամադրվող ֆոնդերը սահմանափակ են: Դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը դեռևս չի նշանակում, որ ձեր դիմումը կընտրվի կրթաթոշակ հատկացնելու համար:
- **Քանի՞ ուսանող է նախատեսված ընտրել՝ կրթաթոշակ տրամադրելու համար:**
Յուրաքանչյուր տարի ՀԿՀ-ի կողմից տրամադրվում է 10-15 կրթաթոշակ՝ կախված վարձավճարների ծավալից և ֆոնդերի առկայությունից:
- **Ի՞նչ չափանիշներով են ընտրվում կրթաթոշակառու ուսանողները:**
Կրթաթոշակի տրամադրման որոշում կայացնելիս հիմնականում հաշվի է առնվում ուսանողի առաջադիմությունը և սոցիալական-ֆինանսական պայմանները: Առավելություն է տրվում գերազանցիկ, ծանր ֆինանսական պայմաններում գտնվող, հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ, ազատամարտիկների և բազմազավակ (հինգ երեխա և ավելի) ընտանիքների ուսանողներին:
- **Ի՞նչ փուլերով է իրականացվում մրցույթը: Արդյո՞ք նախատեսվում է հարցազրույցների անցկացում:**
Մրցույթի առաջին փուլում ընտրող հանձնաժողովի անդամները գնահատում են հայտերը՝ ըստ վերոնշյալ չափանիշների: Առավել բարձր գնահատականներ ստացած հայտերը քննարկվում են ընտրող հանձնաժողովի հանդիպման ընթացքում, որից հետո կազմվում է ընտրված հայտերի ցուցակը: Այս հայտերը ներկայացրած ուսանողները հրավիրվում են հարցազրույցի՝ վերջնական որոշում կայացնելու համար:
- **Իմ միջին գնահատականը 4.0-ից ցածր է, սակայն ֆինանսական և սոցիալական անբարենպաստ/ծանր պայմաններում եմ ապրում: Կարո՞ղ եմ դիմել և մասնակցել մրցույթին:**
Մրցույթին կարող են դիմել միայն ակադեմիական առաջադիմության առնվազն 4 (չորս) միջին նիշը ունեցող ուսանողները (5 բալանոց համակարգի դեպքում): Բալային մյուս հասկարգերում միջին գնահատականը դիտարկվում է համաչափության սկզբունքներով (10 բալանոցում՝ մինիմում 6, 20 բալանոցում՝ 14 բալ):

- **Ես Հայաստանի քաղաքացի եմ, բայց սովորում եմ արտերկրում: Կարո՞ղ եմ կրթաթոշակ ստանալ՝ ուսման վարձը հոգալու համար:**
 Ոչ: Կրթաթոշակը տրամադրվում է միայն Հայաստանի պետական ԲՈՒՀ-րում սովորողներին:
- **Իմ բուհը տրամադրում է պետական նմուշի դիպլոմ, արդյո՞ք այն համարվում է պետական բուհ:**
 ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը տես ԿԳՆ կայքում. <http://www.edu.am/DownloadFile/261arm-Universities.pdf>
- **Ես սովորում եմ ՀՀ պետական բուհի անվճար (պետպատվեր) համակարգում: Կարո՞ղ եմ դիմել կրթաթոշակ ստանալու համար:**
 Ոչ, կրթաթոշակը տրամադրվում է միայն վճարովի համակարգում սովորողների համար՝ ուսման վարձը հոգալու համար:
- **Ես ցանկանում եմ դիմել մագիստրատուրա, և ցանկանում եմ դիմել կրթաթոշակի համար: Եթե ես ընտրվեմ մրցույթում և հետագայում հնարավորություն ունենամ անվճար սովորել, կստանա՞մ արդյոք կրթաթոշակը:**
 Հնարավոր է, որ մրցույթով դուք ընտրվեք, սակայն եթե ուսումնական տարվա սկզբում պարզվի, որ դուք անվճար համակարգում եք, կամ պետական այլ օգնություն ստանաք վարձը վճարելու համար, ձեզ կրթաթոշակ չի հատկացվի: Եթե օգնություն ստանաք՝ վարձի մասնակի վճարի տեսքով, ապա մենք կփոխանցենք ԲՈՒՀ-ին միայն վարձի այն մասը, որ պակասում է:
- **Ի՞նչ մեխանիզմով է տրամադրվում կրթաթոշակի գումարը:**
 Կրթաթոշակի գումարը փոխանցվում է համապատասխան բուհին յուրաքանչյուր կիսամյակ՝ հաշվի առնելով ուսանողի առաջադիմությունը և բուհի տրամադրված հաշիվ-ապրանքագիրը: Կրթաթոշակը չի տրամադրվում առձեռն գումարի տեսքով:
- **Ես սովորում եմ վճարովի համակարգում, սակայն ուսման վարձիս որոշ մասը հոգում է պետությունը: Կարո՞ղ եմ դիմել և մասնակցել մրցույթին ուսման վարձի մյուս կեսի համար:**
 Այո, կարող եք, դիմումի մեջ նշելով այն գումարը, որը չի վճարվում պետության կողմից:
- **Քանի՞ տարվա համար է տրամադրվում կրթաթոշակը:**
 Կրթաթոշակը տրամադրվում է մեկ տարվա համար, սակայն հնարավոր է, որ այն երկարաձգվի նաև հաջորդ տարի, եթե իհարկե ուսանողը շարունակում է համապատասխանել կրթաթոշակի համար անհրաժեշտ չափանիշներին:
- **Կան բուհեր կամ մասնագիտություններ, որոնց առաջնահերթություն է տրվում:**
 Ոչ, 2010-2011թթ. ծրագրում բոլոր ՀՀ պետական բուհերը և բոլոր մասնագիտությունները հավասարազոր են:

- **Ես սովորում եմ հեռակա ուսուցման համակարգով: Կարո՞ղ եմ դիմել և մասնակցել մրցույթին:**
Այո, կարող եք:

- **Մեր ԲՈՒՀ-ում գնահատման համակարգը 5 բալանոց չէ: Ինչպե՞ս որոշեմ միջին գնահատականս: Ինչպե՞ս նշեմ հայցադիմումում:**
Հայցադիմումում նշեք ձեր միջին գնահատականը՝ ըստ ձեր բալային համակարգի, փակագծերում նշելով բալային համակարգը, օրինակ՝ 16.5 (20-բալանոց համակարգում): Սակայն մրցույթի պահանջներին համապատասխանելու համար Ձեր միջին միավորը 20-բալանոց համակարգում պետք է լինի 14 կամ բարձր, իսկ 10 բալանոցում՝ 6 կամ բարձր:

- **Ես սովորում եմ մագիստրատուրայում / ասպիրանտուրայում / օրդինատուրայում: Կարո՞ղ եմ մասնակցել մրցույթին:**
Այո, կարող եք:

- **Ի՞նչ պարտավորություններ եմ ստանձնում ուսանողը՝ կրթաթոշակը ստանալուց հետո:**
Կրթաթոշակը ստանալու դեպքում ուսանողը պարտավորվում է շարունակել սովորել բարձր առաջադիմությամբ (5-բալանոց համակարգով միջին նիշը՝ 4), մասնակցել կրթաթոշակ ստացած ուսանողների հանդիպումներին, ինչպես նաև տարեկան առնվազն 60 ժամ կամավորական աշխատանքներ իրականացնել որևէ հաստատությունում (հասարակական կազմակերպություն, եկեղեցի և այլն):